ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Դավթյան Դիանա Արարատ Ա/Ձ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/384 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
1	DTGM3A18	DTGM3A18	Գնման առարկան՝ բենզինային խոտհնձիչ մեքենա, նախատեսված այգիների, պուրակների, բակերի, կանաչապատ տարածքների և այլ տարածքների խոտաճածկի հնձման և խնամքի աշխատանքների իրականացման համար: Սարքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության և նախատեսված կանաչապատ տարածքների արդյունավետ սպասարկման համար: Խոտհնձիչ մեքենան պետք է ունենա առնվազն հետևյալ տեխնիկական պարամետրերը. • շարժիչի տեսակը՝ բենզինային, չորստակտ, • շարժիչի աշխատանքային ծավալը՝ ոչ պակաս, քան 146 սմ³, • շարժիչի հզորությունը՝ ոչ պակաս, քան 2.6 կՎտ, • շարժիչի պտտման արագությունը՝ առնվազն 2900 պտ/րոպե, • պտտող մոմենտը՝ ոչ պակաս, քան 7 Ն·մ, • շարժիչի յուղի տարողությունը՝ ոչ պակաս, քան 0.5 լ, • վառելիքի բաքի տարողությունը՝ ոչ պակաս, քան 0.8 լ, • գործարկման համակարգը՝ ձեռքով մեկնարկիչով, • տեղաշարժման եղանակը՝ ձեռքով, • հնձման լայնությունը՝ ոչ պակաս, քան 398 մմ, • հնձման բարձրությունը՝ 25-70 մմ • հնձման բարձրության կարգավորման

			դիրքերի քանակը՝ ոչ պակաս, քան 6, • առջևի անիվների տրամագիծը՝ ոչ պակաս, քան 6 դյույմ, • հետևի անիվների տրամագիծը՝ ոչ պակաս, քան 7 դյույմ, • խոտհավաքիչի տարողությունը՝ ոչ պակաս, քան 40 լ, • խոտհավաքիչի նյութը՝ պլաստիկ կամ տեխնիկական բնութագրերով համարժեք նյութ, • հնձման դեկի նյութը՝ պլաստիկ • խոտհնձիչի գործառույթները՝ խոտի հավաքում, ցանքածածկում (մուլչավորում) և խոտի հետին արտանետում, • շահագործման թույլատրելի ջերմաստիճանային միջակայքը՝ առնվազն -5°C-ից մինչև +40°C, • աղմուկի մակարդակը՝ ոչ ավելի, քան 96 դԲ, • սարքի զուտ քաշը՝ ոչ ավելի, քան 20.2 կգ: Խոտհնձիչ մեքենան պետք է ապահովի հնձված խոտի հավաքման, մուլչավորման և հետին արտանետման հնարավորություններ: Հնձման բարձրությունը պետք է կարգավորվի առնվազն 6 դիրքով՝ ապահովելով 25-70 մմ միջակայքը կամ դրանից ավելի լայն կարգավորման հնարավորություն: Սարքը պետք է մատակարարվի աշխատանքի համար անհրաժեշտ ամբողջական կոմպլեկտավորմամբ՝ ներառյալ խոտհավաքիչը, հնձման աշխատանքների համար նախատեսված ստանդարտ պարագաները և արտադրողի կողմից տվյալ մոդելի համար նախատեսված անհրաժեշտ այլ բաղադրիչները: Մատակարարվող ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ և առանց տեսանելի մեխանիկական կամ այլ վնասվածքների: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 12 ամիս: Մատակարարը պարտավոր է ապրանքը մատակարարել գնորդի կողմից նշված հասցեով՝ ապահովելով դրա անվտանգ տեղափոխումը մինչև մատակարարման վայր: Նմուշը նախքան մատակարարումը պետք է համաձայնեցնել գնորդի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Давтян Диана Арарат ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁՔ-26/384 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	товарный знак	технические характеристики
1			